

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ (ՏՐԱՎՄԱՏԻԶՄԻ)

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ

2017

ՀՏԴ 616-001

ԳՄԴ 54.58

Ա 583

Ա 583 Վնասվածքների (տրավմատիզմի) հիմնախնդիրներն աշխարհում և Հայաստանում:
Դ. Անդրեասյան, ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային
ինստիտուտ, 2017. էջ 80:

«Վնասվածքների (տրավմատիզմի) հիմնախնդիրներն աշխարհում և Հայաստանում» զեկույցում արտացոլված են վնասվածքների վերաբերյալ առկա իրավիճակային վերլուծությունը (ըստ ԱՀԿ և ազգային վիճակագրական տվյալների), գործող ռազմավարություններն և օրենսդրությունները, Հայաստանում վնասվածքների վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացն և վնասվածքների ռեգիստրի ստեղծման ու վարման միջազգային փորձը:

Զեկույցը նախատեսված է առողջապահական համակարգի կազմակերպիչների, առողջապահության ոլորտի փորձագետների, բժիշկների և այլ շահագրգիռ մասնագետների համար:

ՀՏԴ 616-001

ԳՄԴ 54.58

ISBN 978-9939-9156-9-2

©ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԱՍՓՈՓԱԳԻՐ.....	3
I	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	10
II	ՄԱՆԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ.....	13
III	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ.....	18
IV	ԱԿԿ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	23
V	ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	26
VI	ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ (ՏՐԱՎՄԱՆԵՐԻ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	28
VII	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	39

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Առանցքային փաստեր

- Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների, աշխարհում ամեն տարի 5,8 մլն մարդ է մահանում տարբեր տեսակի վնասվածքներից, որը կազմում է բոլոր պատճառներից առաջացած մահերի 10% և հաշմանդամության բոլոր պատճառների՝ 16%:
- Վնասվածքները հանդիսանում են անհետաձգելի բուժօգնության և հոսպիտալացման տասնյակ միլիոնավոր դեպքերի պատճառ:
- Վնասվածք ստանալու ավելի քարձր ռիսկը սպառնում է ավելի ցածր սոցիալ-տնտեսական շերտերի ներկայացուցիչներին, որոնք ավելի քիչ են օգնություն ստանում կանխարգելիչ ծրագրերից:



Ճանապարհատրանսպորտային վնասվածքներ

- Ամեն տարի ճանապարհատրանսպորտային վնասվածքների հետևանքով մահանում է մոտ 1,25 միլիոն մարդ:
- Ճանապարհատրանսպորտային վնասվածքները հանդիսանում են 15-29 տարեկան երիտասարդների մահվան հիմնական պատճառներից մեկը:
- Ճանապարհներին մահերի 90%-ը կատարվում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում, չնայած այդ երկրներում գրանցված է աշխարհի տարնսպորտային միջոցների մոտ 54%-ը:

- Աշխարհում ճանապարհներին մահացողների գրեթե կեսը հանդիսանում են հետիոտները, հեծանվորդներն և մոտոցիկլավարները՝ «ճանապարհներից օգտվողների խոցելի զանգվածը»:
- Ճանապարհատրանսպորտային պատահարները (ՃՏՊ) պետությունների մեծ մասի համար կազմում է նրանց ՀՆԱ 3%-ը:
- Համաձայն ԱՀԿ կանխատեսումների, ՃՏՊ նվազեցմանն ուղղված ծրագրերի բացակայության դեպքում 2030 թ. իրենց թվով ՃՏՊ կդառնան յոթերորդը՝ մահվան պատճառների կազմում:
- ՄԱԿ կայուն զարգացման կարևորագույն նպատակներից մեկն է մինչև 2020թ. կրկնակի անգամ նվազեցնել ՃՏՊ-ներից առաջացած վնասվածքներն և մահերը:



Ընկնել/(վայր ընկնելը)

- Ամբողջ աշխարհում ընկնելը դժբախտ պատահարների և ոչ միտումնավոր վնասվածքների հետևանքով առաջացած մահերի կազմում թվով երկրորդն է: Ընկնելը կազմում է երեխաների անհետաձգելի բուժօգնության հիվանդանոց դիմելու դեպքերի կեսը: Չնայած, որ ընկնելու մեծ մասը առաջացնում են ընդամենը քերծվածքներ և կապտուկներ, սակայն ամեն օր **130 երեխա** մահանում է ընկնելու պատճառով:
- Ընկնելու լուրջ հետևանքներից կարելի է խուսափել ձեռնարկելով մի շարք միջոցառումներ, ինչպես պատուհանավանդակների ներկայությունը, մանկական խաղահրապարակներում սարքավորումների անվտանգության կանոններին խիստ հետևելը և այլն:
- Ընկնելու պատճառով ամեն տարի աշխարհում գրանցվում է 424 000 մահվան դեպք, որոնցից 80%-ը բաժին է ընկնում ցածր և միջին եկամտով երկրներին:
- Ընկնելու դեպքերը մահացու ելքով ավելի հաճախ հանդիպում են 65 տարեկանից բարձր մարդկանց շրջանում:
- Ամեն տարի գրանցվում է ընկնելու 37,3 միլիոն դեպք, որոնց դեպքում պահանջվում է բուժօգնություն:



Այրվածքներ

- Կրակից ստացված այրվածքներից ամեն տարի մահանում է ավելի քան 300 000 մարդ, որոնցից 260 000-ը՝ երեխա:

Ջրահեղձություն (ջրում խեղդվելը)

- Ամբողջ աշխարհում ջրահեղձությունը դժբախտ պատահարների և ոչ միտումնավոր վնասվածքների հետևանքով առաջացած մահերի կազմում թվով երրորդն է՝ վնասվածքների հետ կապված մահվան դեպքերի 7%-ը: Ամեն տարի ջրահեղձությունից գրանցվում է 372 000 մահվան դեպք:
- Ջրահեղձության առավել մեծ ռիսկի են ենթակա երեխաները, տղամարդիկ և ջրի հետ առնչություն ունեցող մարդիկ:

Խայթոցներ

- Կենդանիների խայթոցը հանդիսանում է հիվանդացության և մահվան կարևորագույն պատճառներից մեկը ողջ աշխարհում:
- Աշխարհում մինչև հինգ միլիոն մարդ, հիմնականում Աֆրիկայում և Հարավ Արևելյան Ասիայում, ենթարկվում են օձերի խայթոցներին:
- Թունավոր օձի խայթելու դեպքում պահանջվում է անհապաղ բուժում համապատասխան հակաթույնի միջոցով:
- Շների կծելը ամեն տարի բերում է տասնյակ միլիոն վնասվածքների, առավել մեծ ռիսկի են ենթարկվում երեխաները:
- Շների, կատուների և կապիկների կծելուց հետո զարգացող կատաղությունը հանդիսանում է առողջապահության գերակա խնդիրներից մեկը:

Բռնություններ/սպառնություններ

- Սպանությունների հետևանքով ավելի շատ մարդ է մահանում, քան պատերազմական գործողություններից, իսկ ավելի շատ մահանում են ինքնասպանության հետևանքով:
- Փաստացի, պատերազմական գործողությունների հետևանքով մահվան յուրաքանչյուր դեպքին ընկնում է սպանության պատճառով մահվան երեք և ինքնասպանության հետևանքով հինգ դեպք:
- Բռնությունների առավել մեծ քանակ կատարվում է փակ դռներից այն կողմ և չի բերում մահվան, սակայն հաճախ դառնում է երկար տարիների ֆիզիկական հուզական տառապանքների պատճառ:

Բռնություն էրեխաների նկատմամբ

- Հարցված մեծահասակների մեկ քառորդը հայտնում են, որ մանկական տարիքում ենթարկվել են ֆիզիկական բռնության:
- Յուրաքանչյուր 5-րդ կինը, 13-րդ տղամարդը հայտնում են, որ մանկական տարիքում ենթարկվել են սեռական բռնությունների:
- Երեխաների նկատմամբ բռնության հետևանքները ներառում են առողջության ֆիզիկական և հոգեկան խանգարումներ ողջ կյանքի ընթացքում, իսկ հետևանքները սոցիալական և մասնագիտական ոլորտում, վերջին հաշվով, կարող են դանդաղեցնել երկրի տնտեսական և սոցիալական զարգացումը:
- Երեխաների նկատմամբ բռնությունը կարելի է կանխել, դրա համար անհրաժեշտ է բազմաոլորտային մոտեցում և համապատասխան միրոցառումներ:
- Կանխարգելման արդյունավետ ծրագրերի օգնությամբ կարելի է աջակցել ծնողներին և սերմանել երեխաների դաստիարակման դրական ունակություններ:

Բռնություն կանանց նկատմամբ

- Համաձայն ԱՀԿ կողմից հրապարակված բռնության տարածվածության տվյալների, աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին (35%) իր կյանքի ընթացքում ենթարկվում է ֆիզիկական կամ սեռական բռնության ինտիմ գուգընկերոջ, կամ այլ անձի կողմից:
- Ողջ աշխարհում սեռական հարաբերությունների մեջ գտնվող կանանց 30%-ը հայտնում են, որ կյանքի ընթացքում գուգընկերոջ կողմից ենթարկվել են ֆիզիկական կամ սեռական բռնության:
- Աշխարհում կանանց սպանության մինչև 38%-ը կատարվում է արական սեռի գուգընկերոջ կողմից:
- Բռնությունը կարող է բերել ֆիզիկական, հոգեկան, սեքսուալ և վերարտադրողական առողջության խանգարման և այլ խնդիրների, ինչպես նաև բարձրացնել խոցելիությունը ՄԻԱՎ վարակի նկատմամբ:
- Բռնության բարձր ռիսկի գործոնները ներառում են կրթության ցածր մակարդակը, մանկական տարիքում կրած բռնությունը, ալկոհոլի վնասակար օգտագործումը, բռնության և գենդերային անհավասարության նկատմամբ հանդուրժողականությունը:

Երիտասարդական բռնություն

- Աշխարհում ամեն տարի սպանությունների դեպքերի մոտ 200 հազարը կատարվում է 10-29 տարեկան երիտասարդ անձանց շրջանում, ինչը կազմում է սպանությունների ընդհանուր թվի 43%-ը:
- Սպանությունները իրենց թվով մահվան պատճառների կազմում չորրորդն են 10-29 տարեկան երիտասարդ անձանց շրջանում, ընդ որում սպանությունների դեպքերի 83% գոհ են դառնում տղամարդիկ:

Բռնություն տարեց մարդկանց նկատմամբ

- Մոտավորապես յուրաքանչյուր տասերորդ տարեց անձն ամեն ամիս ենթարկվում է բռնության:
- Ծերանոցներում (տուն-ինտերնատներում) բնակվող տարեցների նկատմամբ բռնության ցուցանիշներն կարող են ավելի բարձր լինել համայնքներում բնակվող տարեցների համանման ցուցանիշներից:
- Ըստ կանխատեսումների, տարեցների նկատմամբ բռնության մասշտաբները կարող են աճել, կապված շատ երկրներում բնակչության ծերացման հետ:
- 60 և բարձր տարիքի մարդկանց ընդհանուր թվաքանակը 2050 թ-ին 2015 թ-ի նկատմամբ կկրկնապատկվի՝ դառնալով 900 միլիոնից մինչև 2 միլիարդ:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների, աշխարհում ամեն տարի 5.8 մլն մարդ է մահանում տարբեր տեսակի վնասվածքներից, որը կազմում է բոլոր պատճառներից առաջացած մահերի 10%: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ վնասվածքների արդյունքում շատ ավելի մեծ թվով մարդիկ հաշմանդամ են մնում ամբողջ կյանքում:
2. Ինչպես Եվրոպական տարածաշրջանի երկրներում, այնպես էլ Հայաստանում, արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (ԱՇՀՀ), չարորակ նորագոյացություններից (ՉՆ) և շաքարային դիաբետից (ՇԴ) հետո, որպես մահաբերության պատճառ, վնասվածքները զբաղեցնում են չորրորդ տեղը, և հանդիսանում են առողջապահության հիմնախնդիրներից մեկը:
3. Վնասվածքները շոշափելի ազդեցություն են ունենում բնակչության առողջության վրա, բերելով հաշմանդամության, աշխատունակության ժամանակավոր կորստի և տարատեսակ ֆունկցիոնալ և հոգեկան խանգարումների:
4. 5-44 տարիքային խմբերում վնասվածքները վաղաժամ մահացության և հաշմանդամության պատճառով կյանքի տևողության կրճատման հիմնական պատճառներից մեկն է:
5. Վայր ընկնելը վնասվածքների, այդ թվում մահվան ելքով, լուրջ պատճառ է հանդիսանում տարեցների շրջանում:
6. Համաձայն գնահատումների՝ յուրաքանչյուր մահվան դեպքի հակակշռում են հոսպիտալիզացման 30, շտապ օգնության բաժիններ դիմելու 300 և ինքնաբուժման փորձերի կամ ընդհանուր պրոֆիլի բժիշկների օգնությանը դիմելու հազարավոր դեպքեր:
7. Չկանխատեսված վնասվածքներով և բռնություններով են պայմանավորված ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանում առողջ կյանքից բոլոր կորցված տարիների (DALY) 14%-ը: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ վերականգնողական առողջապահության համակարգերի և ընդհանուր առմամբ հանրության կրած ծախսերը հսկայական են:
8. Համաձայն գնահատումների՝ միայն ճանապարհատրանսպորտային վնասվածքներից (ՃՏՊ), հանրության համար ֆինանսական բեռը հասնում է Եվրոպական երկրների (<http://www.who.int/mediacentre/news/releases/2017/half-deaths-recorded/en/>) ազգային

համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մինչև 3.1%-ին:

9. Չնայած բռնության այլ տեսակները լայնորեն չեն ուսումնասիրվել, սակայն առկա տվյալները վկայում են, որ տանը կամ ազատ ժամանցի ընթացքում ստացված չկանխամտածված վնասվածքների առաջացած ծախսերը, օրինակ՝ Նորվեգիայում կազմում են ՀՆԱ-ի 6.4%-ը, Միացյալ Թագավորությունում գույքընկերոջ կողմից բռնության բեռը կազմում է երկրի ՀՆԱ-ի 2.2%-ը:
10. Եվրոպական տարածաշրջանում վնասվածքների տնտեսական բեռը բաժանվում է անհամաչափորեն: Տարածաշրջանի ցածր և միջին եկամուտ ունեցող երկրի բնակիչների համար վնասվածքներից մահանալու հավանականությունը չորս անգամ ավելի բարձր է, քան բարձր եկամուտ ունեցող երկրների բնակիչների համար: Վնասվածքաբանության առումով անհավասարությունը լուրջ հետևանքներ է ունենում տարածաշրջանում սոցիալական արդարության և իրավահավասարության համար: Եթե Եվրոպայի ամենաանվտանգ երկրներում գոյություն ունեցող սոցիալական և տնտեսական պայմանները (ներառյալ կանխարգելման ծրագրերի առկայությունը, բայց չսահմանափակվելով դրանցով) գործեին ողջ տարածաշրջանում, ապա հնարավոր կլիներ փրկել տարեկան մոտ 500 000 կյանք: Տարածաշրջանի շատ երկրներ, օրինակ՝ Հյուսիսային Եվրոպայի երկրները վնասվածքների կանխարգելման ուղղությամբ սկսել են աշխատել մի քանի տասնյակ տարիներ առաջ, այն դեպքում, երբ մյուս երկրները միայն այժմ են սկսել համապատասխան միջոցառումներ ներդնել:
11. Հենաշարժական համակարգի վնասվածքներն և դրանց հետևանքները համարվում են ժամանակավոր անաշխատունակության և հաշմանդամության հիմնական պատճառներից մեկը: Չնայած վերջին տարիներին վնասվածքների բուժման ուղղությամբ էական ձեռքբերումներ են գրանցվել, այնուամենայնիվ, հենաշարժական համակարգի վնասվածքները դեռևս մնում են բժշկասոցիալական հիմնախնդիր: Վնասվածքների կանխարգելմանն ուղղված ԱՀԿ-ի Եվրոպական տարածաշրջանի թիվ EUR/RC55/R9 որոշումը (2005 թվականի սեպտեմբեր) և Եվրոխորհրդի առաջարկությունները (2007 թվական, մայիս) հիմք են հանդիսանում վնասվածքների կանխարգելումը հանրային առողջապահության կարևորագույն ուղղություն առաջադրելու համար:
12. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 2010 թվականի մարտին ընդունված թիվ 64/255

որոշման համաձայն՝ 2011-2020 թվականները հայտարարված են «Ճանապարհային անվտանգության ապահովման» գործողությունների տասնամյակ: Վերջինիս նպատակն է ամբողջ աշխարհում զսպել ՃՏՊ-ների աճն և հետագայում նաև նվազեցնել դրանցով պայմանավորված մահացության ցուցանիշներն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում՝ ՃՏՊ-ների կանխման միջոցառումների ակտիվացման միջոցով:

13. Եվրոպական տարածաշրջանում, ՃՏՊ-ների հետևանքով առաջացած վնասվածքները հանրային առողջապահության կարևորագույն հիմնախնդիր են: ԱՀԿ-ի կողմից վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- ՃՏՊ-ների և բարձրությունից ընկնելու հետ կապված վնասվածքները համարվում են մանկական հաշմանդամության հիմնական պատճառ: Յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում ՃՏՊ-ների արդյունքում մահանում է ավելի քան 260 000 երեխա:
- 5-29 տարիքային խմբում մահվան հիմնական պատճառներից են ՃՏՊ-ների հետևանքով առաջացած վնասվածքները, անելին մահվան դեպքերի 73%-ը բաժին է ընկնում տղամարդկանց:
- Բարձր եկամուտ ունեցող երկրներում ՃՏՊ-ների հետևանքով առաջացած վնասվածքների հաճախականության և դեպքերի ծանրության աստիճանի զգալի նվազեցումը պայմանավորված է որոշակի միջոցառումներով, ներառյալ՝ արագության սահմանափակումը, դեկին ակոնոլ օգտագործելու արգելքը, անվտանգության ամրագոտիների և սաղավարտների կիրառման, երեխաների համար նախատեսված նստարանների և հավելյալ բարձիկի օգտագործման վերաբերյալ օրենսդրական միջոցառումները, ինչպես նաև առավել անվտանգ ճանապարհներ կառուցելու և տրանսպորտային միջոցներ շահագործելու ծրագրերը:
- Հոգնածությունը հատկապես լուրջ հիմնախնդիր է առևտրա-տրանսպորտային միջոցների վարորդների շրջանում: Սմերիկայի Միացյալ Նահանգներում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ հոգնածությունը մասամբ հանդիսանում է առևտրային ծանր տրանսպորտային միջոցների ՃՏՊ-ների ընդհանուր դեպքերի թվում մահվան էլքով ավարտված դեպքերի 30%-ի պատճառը: Արձանագրված վթարների 52% դեպքերից առնվազն մեկը եղել է բեռնատար ավտոմեքենա: Բեռնատարների վարորդների 18%-ը խոստովանել է, որ մեքենան վարելիս քնել է:

II. ՄԱՆԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Բոլոր երկրներում մանկական վնասվածքները դառնում են տարբեր

գերատեսչությունների մասնագետների և պատասխանատու անձանց ավելի լայն շրջանի, առանձնահատուկ մտահոգության առարկան:

Վնասվածքների առաջացման խնդրում էական նշանակություն ունեն երեխաների անատոմիաֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները, նրանց ֆիզիկական և մտավոր զարգացումը, կենցաղային հմտությունների անբավարարությունը, մեծ հետաքրքրասիրությունը և այլն:

Տարբերվում են մանկական վնասվածքների հետևյալ տեսակները.

- կենցաղային,
- փողոցային (տրանսպորտային և ոչ տրանսպորտային),
- դպրոցական,
- սպորտային,
- այլն:

Մանկական վնասվածքների բնույթը ուսումնասիրվում է ըստ հետևյալ տարիքային խմբերի. ա) կրծքով կերակրման տարիքի (մինչև 1 տարի), բ) մինչնախադպրոցական (1-3 տարեկան), գ) նախադպրոցական (3-7 տարեկան), դ)դպրոցական (7-16 տարեկան):

14. Ներկայում վնասվածքներից և դժբախտ պատահարներից ավելի մեծ թվով երեխաներ են մահանում, քան մանկական վարակիչ հիվանդություններից:

15. Ըստ Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մանկական հիմնադրամի 2008

թվականի «Մանկական վնասվածքների կանխարգելման համաշխարհային հաշվետվության», երեխաների և դեռահասների մոտ տարբեր պատճառներից առաջացած վնասվածքների վերաբերյալ գրանցվել են հետևյալ տվյալները.

- Կրծքով կերակրման և մինչ նախադպրոցական տարիքում գերակշռում են կենցաղային վնասվածքները՝ համապատասխանաբար կազմելով 70-80% և 65-75%: Դպրոցական

տարիքում ավելի տարածված են վնասվածքների այլ տեսակները՝ փողոցային, սպորտային և այլն:

- Մանկական վնասվածքների 95%-ը գրանցվում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում, սակայն մեծ խնդիր է նաև բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ կազմելով երեխաների մահվան բոլոր դեպքերի ավելի քան 40%-ը:
- Ըստ սեռային բաշխվածության տղաների մոտ վնասվածքներն ավելի հաճախ են հանդիպում և դրանց հետևանքներն ավելի ծանր են լինում: Դա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ տղաներն ավելի ակտիվ ֆիզիկական վարքագիծ են դրսևորում և հաճախ են մասնակցում վնասվածքների առաջացման ռիսկով հղի ժամանցային, խաղային և այլ միջոցառումներին:
- Ամեն տարի ամբողջ աշխարհում մինչև 18 տարեկանների խմբում ավելի քան 830000 երեխա և դեռահաս մահանում է ոչ կանխամտածված վնասվածքների արդյունքում: Մինչև 20 տարեկանների խմբում վայր ընկնելու հետևանքով մահանում են շուրջ 47000 երեխաներ, դեռահասներ ու պատանիներ:
- Վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքների ամենամեծ ռիսկային խումբ են կազմում մինչև մեկ տարեկան երեխաները:
- ՃՏՊ-ների հետևանքով առաջացած վնասվածքներին ու ջրահեղձությանը, միասին վերցրած, բաժին է հասնում մանկական վնասվածքների բոլոր դեպքերի մոտավորապես կեսը:
- Յուրաքանչյուր օր ավելի քան 1000 երեխա գլխուղեղի վնասվածքի հետևանքով հաշմանդամ է դառնում ամբողջ կյանքի ընթացքում:
- Այրվածքներից երեխաների մահացության ավելի քան 95%-ի պատճառ է հանդիսանում կրակից այրվածքները: Տաք հեղուկներից կամ այլ պատճառներից առաջացած տեղային այրվածքները ևս համարվում են ոչ մահացու վնասվածքների և հաշմանդամության առաջացման տարածված պատճառ: Այրվածքը վնասվածքների միակ տեսակն է, որի ժամանակ վնասվածքի ցուցանիշներն աղջիկների մոտ ավելի բարձր են:

Մանկական կենցաղային վնասվածքներից են նաև տնային պայմաններում, բակում, մանկական նախադպրոցական հիմնարկներում առաջացած վնասվածքները: Դրանցից առավել ծանր են համարվում այրվածքները (առավելապես կրծքով կերակրման տարիքի

երեխաների մոտ) և կոտրվածքները: 1-3 տարեկան երեխաների շրջանում հաճախ հանդիպում են ձեռքի կոտրվածքները, ձգումները, հոդախախտերը: Որպես պատճառ առանձնացվում են հարվածները (30-35%), վնասվածքներն ընկնելիս (22-20%), վնասվածքները սուր առարկաներից (18-20%):

Վնասվածքները հիմնականում բացատրվում են երեխայի նկատմամբ հսկման և ուշադրության անբավարարությամբ: Մանկական կենցաղային վնասվածքների բազմազան պատճառներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ 1) երեխայի սխալ խնամքը, 2) տնային կենցաղավարության կարգ ու կանոնի բացակայությունը (չփակված ելքերը դեպի տանիք, չպաշտպանված աստիճանավանդակները, նկուղների, ջրհորների բաց միջանցքները, հողային աշխատանքների ժամանակ չարգելափակված փորվածքները, վերանորոգվող շինությունների արգելափակումների բացակայությունը, շինարարական տարածքում շինարարական նյութերի ու պարագաների անխնամ կուտակումը և այլն), 3) դաստիարակության թերացումները տանը և դպրոցում, ընդհանուր օգտագործման վայրերում ճիշտ պահվածքի բացակայությունը:

Փողոցային մանկական վնասվածքները ներառում են այն վնասվածքները, որոնք երեխաները ստանում են փողոցում, բաց հասարակական վայրերում, դաշտում, անտառում և այլուր, ինչպես տրանսպորտի հետ կապված, այնպես էլ ոչ տրանսպորտային: Դրանք կազմում են երեխաների վնասվածքների դեպքերի 1/3-ը: Քաղաքում գարնանային և աշնանային ամիսներին, երբ ժամանակի մեծ մասը երեխաներն անցկացնում են տնից դուրս, փողոցային վնասվածքների տեսակարար կշիռն աճում է: Հարկ է նշել, որ այդ վնասվածքների մեծ մասը ծագում է կեսօրին (12⁰⁰-ից 16⁰⁰): ՃՏՊ-րի ժամանակ վրայերթը հետիոտն կամ հեծանվորդ երեխաների մոտ կազմում է 80% և 9% համապատասխանաբար:

Տուժած երեխաների ընդհանուր թվի 3/4-ը վնասվածքներ են ստանում ուղևորատար թեթև և բեռնատար մեքենաներից: Մոտոցիկլիստների, հասարակական տրանսպորտի (ավտոբուս, տրուլեյբուս...) պատճառած վնասվածքների կշիռն ավելի ցածր է: Երեխաների մասնակցությամբ ՃՏՊ-ների մոտ 80% բաժին է ընկնում դպրոցական տարիքի երեխաների: Տրանսպորտային երթևեկության ինտենսիվության հետ կապված, երեխաների ճանապարհատրանսպորտային վնասվածքների շարքում գերակշռող են դարձել հենաշարժիչ համակարգի վնասվածքները: Ի տարբերություն մի քանի տասնյակ տարիներ առաջվա, նշված վնասվածքներում ավելի հաճախ են համադրվում գանգի, կրծքավանդակի և որովայնի վնասվածքները՝ ուղորդված ցնցմամբ, արյան կորստով:

Վնասվածքների ամենամեծ թիվը բաժին է հասնում միջին մանկական տարիքին (11-13 տարեկան): Որպես օրենք, դպրոցների միջանցքներում, աստիճանավանդակներում, ընդհանուր օգտագործման վայրերում, վնասվածքների պատճառ են հանդիսանում կարգապահության խախտումները: Գերակշռում են ընկնելու և կոշտ առարկաներին բախվելու (երեխան սահել կամ սայթաքել է, հրել են վազքի կամ խաղի ժամանակ և այլն) դեպքերը: Հիմնականում դրանք թեթև վնասվածքներ են: Առավել ծանր վնասվածքները՝ կոտրվածքները, գլխուղեղի ցնցումները հանդիպում են բոլոր դպրոցական վնասվածքների 15%-ի դեպքում:

Դպրոցականների շրջանում վնասվածքների մինչև 46%-ը առաջանում են ֆիզկուլտուրայի դասերին թեթև ատլետիկայով զբաղվելիս, որոնցից 53%-ը վազելիս, 27%-ը՝ թռիչք բարձրության մարզումների ժամանակ: Երկրորդ տեղում են վնասվածքները, որոնք ստանում են սպորտային վահանակների վրա մարզական վարժություններ կատարելիս, որոնց հաջորդում են վնասվածքները՝ գնդակով խաղերի ժամանակ (ֆուտբոլ, բասկետբոլ.....):

Բուժաշխատողները պարտավոր են պարտադիր ուսումնասիրել ֆիզկուլտուրայի պարապունքների ժամանակ առաջացած դպրոցական վնասվածքի յուրաքանչյուր դեպք, մանրամասն բացահայտել և ուսումնասիրել դժբախտ դեպքի առաջացման պատճառները, և ֆիզկուլտուրայի ուսուցչի ու դպրոցի ղեկավարության հետ համատեղ միջոցառումներ ձեռնարկել դրանց վերացման համար: Դպրոցական վնասվածքների նվազեցման համար անհրաժեշտ է ֆիզկուլտուրայի ուսուցիչների համար մշակել հատուկ մեթոդական ցուցումներ:

Դպրոցների ուսումնական ծրագրում կարևոր տեղ է զբաղեցնում աշխատանքի ուսուցումը: Աշխատանքի ուսուցման պարապունքների ծրագրերը կազմվում են սովորողների տարիքային և ֆիզիկական վիճակի հաշվի առմամբ և կանխատեսվում են արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության պայմաններում աշխատանքի անվտանգությունն ապահովող հմտությունների հաղորդման պահանջները: Դպրոցականների աշխատանքի անվտանգության կարևորագույն պայմաններն են հանդիսանում սարքավորումների, գործիքների սարքին վիճակը և դրանց հետ վարվելու կանոնները: Աշխատանքի դասերի ժամանակ մանկական վնասվածքների դեպքերը կազմում են մինչև 1%:

Մանկական սպորտային վնասվածքները կազմում են դպրոցական տարիքի երեխաների բոլոր վնասվածքների մինչև 4%: Որպես օրենք, գերակշռում են մանկական սպորտդպրոցներում պարապունքների ժամանակ առաջացած վնասվածքները: Ըստ վնասվածքների բնույթի գերակշռում են հարվածները (ցատկ), ձգվածքները տուժած երեխաների 1/3-ի դեպքում առաջանում են հոդախախտեր և կոտրվածքներ: Կոտրվածքների 85%-ը բաժին է ընկնում վերին

վերջույթներին (բազուկոսկր, դաստակ, մատներ): Ստորին վերջույթների ոսկրերի կոտրվածքներ ավելի հաճախ պատահում են չմշկորդների շրջանում, գեղասահորդների պարապունքների ժամանակ և ֆուտբոլ խաղալիս:

Երեխաների փողոցային տրանսպորտային վնասվածքների (6-9%), ժամանակ հոսափտալացման անհրաժեշտություն է ծագում 85-90% դեպքում, իսկ մահացու դեպքերը կազմում են 12%: Ոչ տրանսպորտային վնասվածքների 25-32% դեպքում այդ թվերը համապատասխանաբար կազմում են 8-11% և 0.03-0.05%: Ավելացել է հեծանիվ վարելու հետ կապված մանկական փողոցային վնասվածքների թիվը, տուժածների 22-25%-ը ստանում են կոտրվածքներ, 25-27%-ը՝ գանգի վնասվածք: Հեծանիվ վարելիս վնասվածք ստացած բոլոր երեխաների 16%-ը հիվանդանոցային բուժման կարիք է ունենում, իսկ 84-86%-ը՝ ամբուլատոր: Նախադպրոցական տարիքի երեխաները հաճախ վնասվածքներ են ստանում հեծանիվից վրայերթի ենթարկվելու պատճառով:

Մանկական վնասվածքների հիմնական պատճառները. 1)անբավարար հսկողությունը դպրոցի ճանապարհին և արտադպրոցական ժամերին, 2)երթևեկության կանոնների և փողոցում վարքի կանոնների չիմացությունը, 3)հանրային տրանսպորտից սխալ օգտվելը, 4)խիզախության, սողամարդկության, հերոսության մասին սխալ պատկերացումներ ունենալու պատճառով ճանապարհային երթևեկության կանոնների կանխամտածված խախտումը, 5)փողոցի երթևեկելի հատվածում խաղերն ու չարաճճիությունները, 6)անսարք փոխադրամիջոցը, վարորդի որակավորումը:

Մանկական վնասվածքները կանխարգելելու համար պետք է. 1) կրծքով կերակրվող երեխաների և մինչնախադպրոցական տարիքի երեխաներին ապահովել ճիշտ խնամք (բացառել այրվածքների հնարավորությունը, երեխաներին թույլ չտալ ինքնուրույն միացնել էլեկտրական սարքերը, էլեկտրահաղորդիչները պահպանել անհրաժեշտ անվտագության պայմաններում և այլն), 2) հանգստի և ժամանցի ընթացքում խստացնել դպրոցականների նկատմամբ հսկողությունը (մանկական սենյակներում, խաղահրապարակներում, այգիներում և այլուր), 3) վերացնել տեխնիկական սարքերի խափանումները տնային տնտեսությունում, 4) երեխաներին աշխատանքնային ճիշտ ունակություններ հաղորդել, 5) երեխաներին սովորեցնել վարքի կանոնները ընդհանուր օգտագործման տեղերում:

Մանկական վնասվածքների կանխարգելման տարրերը.

1)երեխաների նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, անվտանգ ժամանցի կազմակերպումը, 2)ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում երեխաներին՝ օգտագործելով կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը և տարագիր լրատվությունը, 3)երեխաներին խաղալու համար հատուկ տարածքների հատկացումը (խաղահրապարակներ, մանկական այգիներ, սահադաշտեր և այլն), 4)ճանապարհի բանուկ մասերում խաղերի և չարաճճիությունների արգելումը, 5)երկարօրյա խմբերի կազմակերպումը (կրտսեր և միջին տարիքի դպրոցականների համար):

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ՀՀ վնասվածքների, թունավորումների և այլ արտաքին պատճառների (ՎԹԱՊԱՀ) ազդեցության հետևանքներով պայմանավորված մահացության բեռը բնակչության մահացության պատճառների կառուցվածքում զբաղեցնում է 4-րդ տեղը՝ կազմելով 4.8%:

Ամեն տարի ավելի քան 1200 մարդ մահանում է տարբեր բնույթի վնասվածքների, թունավորումների և այլ արտաքին պատճառների ազդեցության հետևանքների արդյունքում:

ՀՀ առողջապահության նախարարության առողջապահության տեղեկատվական վերլուծական կետրոնի (ԱՏՎԿ) տվյալների համաձայն մահացության ցուցանիշը ՎԹԱՊԱՀ 2009 թվականին կազմել է 37.7 (100 000 բնակչի հաշվով), 2010 թ.՝ 38.4, 2011 թ.՝ 41.7, 2012 թ.՝ 45, 2013 թ.՝ 42.3, 2014թ՝ 41.1, 2015թ. 45.1, 2016թ.՝ 43:

Հարկ է նշել, որ 2016թ.-ին 1990թ. Համեմատությամբ, այդ ցուցանիշն նվազել է, սակայն, 2000թ.-ից այն բնութագրվում է ամենամյա աճով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ բնակչության մահացությունը վնասվածքներից, թունավորումներից և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքներից, 1990-2016 թթ.

Վնասվածքներ,թունավորումներևարտաքինպատճառներիներգործությանորոշայլհետևանքներ	1990	1995	2000	2005	2009	2010	2012	2013	2014	2015	2016
Բացարձակ թվեր	1972	1706	1104	1120	1222	1249	1359	1281	1239	1355	1284
Հարաբերական թվեր(100 000 բնակչի հաշվով)	55.63	45.37	29.03	34.81	37.67	38.36	44.94	42.39	41.1	45.1	42.9

Աղբյուր՝ ԱՏՎԿ, 2017

Հայաստանում վնասվածքներից, թունավորումներից և այլ արտաքին պատճառների ազդեցության հետևանքներից մահացության ցուցանիշն զգալիորեն բարձր է արական սեռի մոտ, որն աճում է տարիքային խմբերի հետ զուգահեռ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները փաստում են, որ մինչև 70 տարեկան տղամարդկանց շրջանում մահացության դեպքերը գրեթե 4 անգամ բարձր են կանանց համեմատությամբ:

Աղյուսակ 2. ՀՀ բնակչության մահացությունը վնասվածքներից, թունավորումներից և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքներից ըստ սեռատարիքային խմբերի, 2016թ.

Վնասվածքներ, թունավորումներ և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքներ	Ընդամենը	0-4	5-14	15-19	20-29	30-39	40-49	50-59	60-69	70 և բարձր
Արական	960	10	16	90	168	131	119	151	116	159
Իգական	324	11	6	5	26	18	21	37	46	154

Աղբյուր՝ ԱՏՎԿ, 2017

ՀՀ-ում վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների կառուցվածքում ՃՏՊ-ների հետևանքով առաջացած վնասվածքները կարևոր սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, իրավական և հանրային առողջապահության հիմնախնդիր են: ՃՏՊ-ները ահռելի նյութական, ֆիզիկական, սոցիալական, իրավական և բարոյահոգեբանական վնաս են հասցնում ինչպես հասարակությանն ամբողջապես, այնպես էլ առանձին քաղաքացիներին:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առողջապահության ոլորտը բավականին կշահի ՃՏՊ-ների հետևանքով առաջացած վնասվածքների կանխարգելման բարելավման արդյունքում՝ վնասվածքների պատճառներով բժշկական օգնության և սպասարկման դիմած անձանց թվի, ինչպես նաև վնասվածքների ծանրության աստիճանի նվազման տեսանկյունից:

Համաձայն ՀՀ ճանապարհային ոստիկանության տվյալների, վերջին 12 տարիների ընթացքում ավտովթարների հետևանքով երկրում զոհվել է ավելի քան 4000 մարդ: ՃՏՊ-ների հետևանքներից առավելագույն մեծ թվով մահվան դեպքերը գրանցվում են 15-29 տարիքային խմբում: 2015թ. դրությամբ գրանցվել է ՃՏՊ առաջացած մահացության 319 դեպք, ընդ որում դեպքերի 80% արձանագրվել է տղամարդկանց մոտ, 87% 16-62 տարեկանների խմբերում:

Աղյուսակ 3. ՀՀ բնակչության մահացությունը ՃՏՊ-ից, ըստ ՀՄԴ 10-ի, 2016թ.

ՃՏՊ ըստ ՀՄԴ 10-ի	0- 4	5- 9	10- 14	15- 19	20- 24	25- 29	30- 34	35- 39	40- 44	45- 49	50- 54	55- 59	60- 64	65- 69	70- 74	75- 79	80- 84	85 և բարձր	Ընդա մենը	0- 14
Արական																				
Անձ տուժած չճշտված մոտոտրանսպորտային ճանապարհային դժբախտ պատահարից (V89.2)	0	1	1	3	19	16	15	8	3	6	3	8	3	2	2	0	3	0	93	2
ՃՏՊ (V00-V99) Ընդամենը	1	3	2	6	19	25	22	17	10	8	7	17	8	6	6	6	5	0	168	6
Իգական																				
Անձ տուժած չճշտված մոտոտրանսպորտային ճանապարհային դժբախտ պատահարից (V89.2)	2	0	2	2	3	2	2	1	1	1	2	2	3	2	0	1	0	0	26	4
ՃՏՊ (V00-V99) Ընդամենը	2	0	3	2	4	3	2	4	2	4	5	3	9	4	1	3	2	0	53	5
Ընդամենը																				
Անձ տուժած չճշտված մոտոտրանսպորտային ճանապարհային դժբախտ պատահարից (V89.2)	2	1	3	5	22	18	17	9	4	7	5	10	6	4	2	1	3	0	119	6
ՃՏՊ (V00-V99) Ընդամենը	3	3	5	8	23	28	24	21	12	12	12	20	17	10	7	9	7	0	221	11

Աղբյուր՝ ԱՏՎԿ, 2017

Ամենտարի գլխուղեղի վնասվածքի հետևանքով ՀՀ բուժհաստատություններում հոսպիտալացվում են ավելի քան 1500 տուժածներ, որոնցից մեծահասակ բնակչությունը կազմում է 900, երեխաներն և դեռահասները՝ 600:

Ընդ որում, մինչև մեկ տարեկան երեխաների շրջանում հոսպիտալացման դեպքերը կազմում են 70-80, որոնք պայմանավորված են ծնողների անուշադրությամբ:

Վերջին տարիներին ՀՀ ճանապարհային երթևեկության ոլորտում ձեռնարկվել են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված ՃՏՊ-ների հետևանքով վնասվածքների կանխարգելմանը, մասնավորապես. 1)մշակվել և կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի թիվ 995-Ն որոշումով հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագիր»-ը՝ 2009-2014 թվականների համար, որի ներդրման արդյունքում նախատեսվել է ՃՏՊ-ների հետևանքով զոհերի թվի կրճատում՝ այնպիսի միջոցառումների շնորհիվ, ինչպիսիք են արագության սահմանափակումները, ոչ սթափ վարելու դեպքում պատժամիջոցները, ամրագոտիների համատարած օգտագործումը, երեխաների համար նախատեսված նստարանների և նստարանների հավելյալ բարձիկի օգտագործումը, մոտոցիկլավարների համար պաշտպանական սաղավարտները և այլն:

1. Ծրագրի ներդրման ընթացքում նախաձեռնվել է միջգերատեսչական

համագործակցություն, ինչպես նաև համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ, մշակվել են անվտանգ ճանապարհային երթևեկության վերաբերյալ տեղեկատվական, կրթական նյութեր և այլն:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի մարտի 30-ի թիվ 211-Ս որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի կանոնադրությունը և անհատական կազմը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1410-Ն որոշմամբ հաստատվել է «ՃՏՊ-ների հետևանքով առաջացած մահ համարվում է ավտովթարին հաջորդող 30 օրերի ընթացքում առաջացած մահը» սահմանումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1327-Ն որոշմամբ հաստատվել է վարորդական վկայական ունեցող և վարորդի թեկնածու համարվող անձանց բժշկական հավատարմագրման կարգը, այն հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում արգելվում է վարել տրանսպորտային միջոց, բժշկական հավատարմագրման մասին տեղեկանքի ձևը, ինչպես նաև ճանա-պարհատրանսպորտային պատահարներից տուժածներին բժշկական օգնություն ցույց տալու կարգը և ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի N 581-Ն որոշումը:

Չնայած ճանապարհատրանսպորտային երթևեկության ոլորտում իրականացված բարեփոխումներին, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունում տրավմատիզմի վերաբերյալ համապարփակ միջոլորտային տեղեկատվության փոխանակման և հաղորդման համակարգը ձևավորման ու զարգացման կարիք ունի, ներառյալ համապատասխան ընթացակարգերի, տեղեկատվական հոսքերի, ցուցանիշների մշակումը և կիրառումը:

Հարկ է նշել, որ միայն համաճարակաբանական հսկողության համակարգի առկայությունը դեռևս բավարար չէ: Ռիսկի գործոնների վերաբերյալ տվյալների հավաստիության հիմնավորման նպատակով համաճարակաբանական հսկողության տվյալները պարբերաբար անհրաժեշտ է համալրել գիտական ուսումնասիրությունների արդյունքներով:

Հանրային առողջապահության տեսանկյունից, տրավմատիզմի կանխարգելումը հիմնվում է գիտական տվյալների վրա՝ օգտագործելով բժշկության, կենսամեխանիկայի, տնտեսագիտության, համաճարակաբանության, սոցիոլոգիայի, քրեագիտության, մանկավարժության, ինժեներական տնտեսագիտության և այլ բնագավառների գիտելիքները:

Վնասվածքների կանխարգելման և առաջացած բեռի նվազեցման նպատակով, ՀՀ Կարավարության 2015թ. հունվարի 22-ի նիստի N2 արձանագրային որոշմամբ հաստատվեց «Տրավմատիզմի կանխարգելմանն ուղղված ռազմավարությունն և 2015-2019թթ. իրականացվող միջոցառումները»:

IV. ԱՀԿ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՀԿ-ի գնահատմամբ վնասվածքները գտնվում է ՈՎՀ-ի հիվանդացության և մահացության հիմնական պատճառների շարքում: ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի կոմիտեի կողմից 2005-2014 թվականների ընթացքում վնասվածքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը (4-ը օգոստոսի, 2014 թվական) հիմնավորում է վնասվածքների կանխարգելման ուղղությամբ արդյունավետ ռազմավարությունների մշակման, ներդրման և բոլոր պետական առողջապահական ծրագրերում դրանց ներառման անհրաժեշտությունը:

Վնասվածքների կանխարգելման հարցում առողջապահության համակարգը առանցքային դեր ունի: Սակայն, վնասվածքների տեսակների բազմազանությունը պարտադրում է այդ գործում տարբեր գերատեսչությունների ակտիվ ներգրավում և մասնակցություն: Շահագրգիռ գերատեսչությունների սերտ համագործակցության պայմաններում փուլ առ փուլ պետք է մշակվեն և ներդրվեն տրավմատիզմի տարբեր տեսակների կանխարգելման ռազմավարություններ:

Այսպիսով, որպես վնասվածքների դեմ պայքարի քաղաքականության մշակման և ներդրման հիմք, անհրաժեշտ է վնասվածքների կանխարգելմանն ուղղված կառավարման համակարգի ձևավորում՝ տարբեր գերատեսչությունների ներգրավմամբ:

Շահագրգիռ գերատեսչությունների համագործակցության ընթացքում առողջապահության ոլորտին հատկացվում է առանձնահատուկ՝ առավել ակտիվ մասնակցություն, որը համակարգում է տարբեր ոլորտների և գերատեսչությունների համագործակցությունը և նպաստում է նրանց միջև տեղեկատվության փոխանակմանը:

Վնասվածքների կանխարգելման ուղղությամբ քաղաքական և ռազմավարական գործողություններ մշակելու համար կարևոր է նաև վնասվածքների տարածվածության վերաբերյալ համապարփակ տեղեկատվական համակարգ ունենալը: Այլ կերպ ասած, որպես վնասվածքների դեմ պայքարի առաջին քայլերից մեկը, անհրաժեշտ է ստեղծել վնասվածքների համապարփակ համաճարակաբանական հսկողության համակարգ, որը հնարավորություն է

տալիս ոչ միայն չափել տրամադրվող բժշկական ծառայությունների որակը, ուղղակի և անուղղակի ծախսերը, այլև վերլուծել վնասվածքներն ըստ տարածվածության, ծանրության աստիճանի, տարիքի և սեռի ու կանխատեսել պահանջվող բժշկական ծառայությունների ծավալները, մարդկանց աշխատանքից բացակայելու ժամանակահատվածը, կյանքի որակի ակնկալվող փոփոխությունները և այլն: Առողջապահության նախարարությունը կարող է օգտագործել այդ արժեքավոր տեղեկատվությունը տրավմատիզմի կանխարգելման գերակայությունների սահմանման և ապացուցահեն ռազմավարությունների մշակման նպատակով:

Վնասվածքների օրինաչափությունների դիտարկումն օգնում է պարզել վնասվածքների տարածվածությունը կանանց և տղամարդկանց, երեխաների և տարեցների մոտ, որն էլ հնարավորություն է տալիս մշակել հասցեական կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված բնակչության առանձին սեռատարիքային և սոցիալական խմբերին:

Հավաստի տվյալները նաև անհրաժեշտ են վնասվածքների կանխարգելման ռազմավարությունների ծախսարդյունավետությունը և հաջողությունները գնահատելու համար:

Առողջապահական ոլորտին է վերապահվում նաև մահվան և ոչ մահվան էլքով բոլոր վնասվածքների վերլուծությունը, տարբեր տեսակի վնասվածքների հետևանքով առաջացած հաշմանադամության, առողջության համար վնասվածքների բացասական հետևանքների վերլուծությունը, ինչպես նաև պատահարների՝ ըստ աշխարհագրական բաշխման, պայմանների և առաջացման հանգամանքների վերլուծությունը:

Առողջապահության ոլորտին անհրաժեշտ են առանձին պատճառներից առաջացած վնասվածքների և մահվան էլքերի վերաբերյալ տվյալների համեմատությունը այլ պատճառներից առաջացած վնասվածքների և մահվան էլքերի վերաբերյալ տվյալների հետ, ինչպես նաև բնակչության տարբեր խմբերում հիվանդացության և մահացության ցուցանիշների հաշվարկ՝ 100 000 բնակչության հաշվով:

Ամփոփելով վնասվածքների դեմ պայքարի առողջապահական կողմը, առաջնորդվելով

ԱՀԿ-ի առաջարկություններով, նպատակահարմար է առանձնացնել առողջապահական համակարգին վերապահված ստորն ուղղությունները.

- 1) քաղաքականության մշակում,
- 2) տվյալների հավաքագրում,
- 3) տուժածներին բժշկական օգնության և սպասարկման ցուցաբերում,

4)կանխարգելում,

5) կադրային ներուժի մասնագիտական վերապատրաստում ,

6)հանրային իրազեկում:

V. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ վնասվածքների կանխարգելման արդյունավետ ծրագրի մշակման համար կարևոր պայման է հանդիսանում վնասվածքների մասին ամբողջական տվյալների առկայությունը:

Հայաստանում վնասվածքների բոլոր դեպքերի մասին տվյալները գրանցվում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից՝ համաձայն ՀՄԴ-10-ի: Բուժհաստատությունների կողմից կիրառվող վիճակագրական հաշվառման և հաշվետվության ձևերում (ՀՀ ՎՎՀ տարեկան Ձև No2 և Ձև No3) վնասվածքների վերաբերյալ տվյալները ներկայացվում են «Վնասվածքների, թունավորումների և այլ արտաքին պատճառների ազդեցության հետևանքների» սյունակով և դա բավարար չափով չի արտացոլում վնասվածքների վերաբերյալ ամբողջական իրավիճակը:

Ընդունված կարգով հավաքագրվող տվյալները հիմնականում պարունակում են տեղեկատվություն վնասվածքի տեսակի վերաբերյալ սահմանափակ նոգոլոգիաների ցանկով: Տեղեկատվության ցածր ապացուցողական մակարդակը հնարավորություն չի տալիս նախագծել արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր և ռազմավարություններ, իրականացնել վնասվածքների մակարդակի, տարածվածության, բնույթի, աճի միտումների վերաբերյալ վերլուծություն: Հաշվետվական ձևերում բացակայում են անհրաժեշտ տվյալները, ինչպիսիք են՝ վնասվածքի առաջացման վայրը, բնույթը, անձի գործունեության տեսակը, որի ընթացքում ստացվել է վնասվածքը:

Վերոհիշյալ խնդիրների լուծման նպատակով մշակվել է ՀՀ տարեկան վարչական հաշվետվական նոր ձև՝ «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում գրանցված վնասվածքների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների մասին» (Ձև No 9), որը ներկայացվել է ՀՀ ԱՆ, ԱՎԾ և ԱրՆ հաստատման:

Հաշվետվական ձևում վնասվածքների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը ներկայացված է՝ ըստ տարիքային խմբերի և առավել հաճախ հանդիպող նոզոլոգիաների, ինչպես նաև ըստ վնասվածքների բնույթի (արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, կենցաղային, փողոցային, սպորտային, ռազմական և այլ):

Հաշվետվական ձևի ներդրումը հնարավորություն կընձեռնի ստեղծել վնասվածքների վերաբերյալ տեղեկատվական համակարգ և իրականացնել համալիր գիտական ուսումնասիրություններ՝ ուղղված հետագա վնասվածքների նվազեցմանը կանխարգելիչ միջոցառումների բարելավման և քաղաքականության մշակման գործում

**VI. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ (ՏՐԱՎՄԱՆԵՐԻ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ,
ԼՈՒՑՄԵՆՏԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Եվրոպական տարածաշրջանի երկրներում 20-րդ դարի 70-ականներից, սկսել են ներդրվել վնասվածքային ռեգիստրները, որոնցում ընդգրկվում են վնասվածքների պատճառով բուժօգնության դիմած պացիենտների տվյալները:

Վնասվածքների մասին տվյալների համակարգչային բազա առաջին անգամ ստեղծվել է ԱՄՆ-ում, 1969 թ. Չիկագոյի հոսպիտալում: 1971 թ. Իլլինոյիսի նահանգում, վնասվածքների մասին տվյալների հավաքմանը մասնակցում էին արդեն 50 հիվանդանոցներ: Այսօր ԱՄՆ-ում վնասվածքների ռեգիստրներ գործում են ավելի քան 37 նահանգներում: Դրանցով փոխանցվող ողջ տեղեկատվությունը միասնականացվում է վնասվածքների մասին տվյալների Ազգային բանկում:

Վնասվածքների Ազգային պոպուլյացիոն ռեգիստրներ գոյություն ունեն նաև Կանադայում, Ավստրալիայում և Նոր Զելանդիայում: Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասում ևս կան վնասվածքների գործող ռեգիստրներ: 1990 թ. Մեծ Բրիտանիայի վնասվածքների ռեգիստր ներմուծվեց տեղեկատվություն առաջին պացիենտի մասին: Արդեն 2010 թ. ռեգիստրի տվյալների բազան ընդգրկում էր 27000 պացիենտների տվյալներ, իսկ տեղեկատվությունը ստացվում էր 157 հիվանդանոցներից: Գերմանիայում՝ վնասվածքով առաջին պացիենտը տվյալների բազայում գրանցվել է 1993 թ., իսկ 2012-ին ռեգիստրում արդեն հաշվվում էր 28805 պացիենտ, որոնց մասին տեղեկատվություն ստացվում էր 573 հիվանդանոցներից: Պետք է նշել, որ զարգացող երկրներում վնասվածքների ռեգիստր ստեղծելու ճանապարհին շատ են խոչնդոտները, այդուհանդերձ, դրանցից մի քանիստում ստեղծվել և հաջողությամբ գործում են վնասվածքների տարածաշրջանային վնասվածքների ռեգիստրներ:

Վնասվածքների ռեգիստրները օգտատերերին հնարավորություն են տալիս.

- 1) գնահատել և բարելավել բուժումը,
- 2) բացահայտել կանխարգելիչ միջոցառումների հնարավորությունները,
- 3) փաստացի հաստատել վնասվածքների բժշկական, տնտեսական և սոցիալական արդյունքները,

4) հետազոտական հիպոթեզներ մշակել և ստուգել:

Կլինիկական նպատակներով ստեղծված վնասվածքների ռեգիստրները պարունակում են ավելի շատ կլինիկական տեղեկատվություն, ինչը բացակայում է հոսպիտալային ադմինիստրատիվ տվյալների բազայում, և այդ պատճառով ավելի հաճախ օգտագործվում է նոր տեսակի կլինիկական միջամտությունների արդյունավետության գնահատման համար: Կանխարգելիչ միջամտությունների համար ստեղծված վնասվածքային ռեգիստրները ընդգրկում են տեղեկատվություն վնասվածքային մեխանիզմի և իրավիճակների մասին: Այդ տեղեկատվությունը կարող է օգտագործվել վնասվածքների ռիսկի իջեցմանն ուղղված կանխարգելման միջոցառումների համար, ինչպես օրինակ՝ մանկական կամ սպորտային հրապարակի ծածկույթի ձևափոխումը, պաշտպանիչ գլխարկի օգտագործումը մտոցիկլով երթևեկելիս, տրանսպորտային միջոցների վարորդների համար արյան մեջ ալկոհոլի առկայության թույլատրելի մակարդակի սահմանափակումը:

Ըստ ռեգիստրի տվյալների կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության գնահատում կարող է իրականացվել պոպուլյացիոն մակարդակում փորձնական ուսումնասիրության օգնությամբ, ինչը, հավուր պատշաճի վարելու դեպքում, ունի բարձրագույն աստիճանի ապացուցողական հնարավորություն:

Վնասվածքների ռեգիստր վարելու հաջողված օրինակ է Նորվեգիայի Հարսթադ քաղաքի փորձը, որը ցույց տվեց, որ վնասվածքի քաղաքային ռեգիստրի ստեղծումը, որում կուտակվում է ոչ միայն ստանդարտ բժշկական տեղեկատվություն, այլև մանրամասն տեղեկություններ քաղաքի տարածքում գրանցված բոլոր վնասվածքների առաջացման հանգամանքների և պատճառների մասին, թույլ է տալիս դրա հիման վրա մշակել արդյունավետ լոկալ (տեղայնացված) կանխարգելիչ ծրագրեր: Հարսթադում վնասվածքների ռեգիստրը գործարկվել է 1995 թ. և ներկայումս տվյալների բազայում ընդգրկված են տեղեկություններ ավելի քան 70000 վնասվածքային դեպքերի մասին:

Երկարատև աշխատանքի ընթացքում Հարսթադում ձեռք է բերվել վնասվածքային ընդհանուր ցուցանիշներ՝ ավելի քան կրկնակի կրճատում, ինչպես նաև վնասվածքների առանձին տեսակների դեպքերի հաճախականությունը հասցվել է գրոյի:

Ռեգիստրի տվյալների օգտագործումը հնարավորություն է տվել մշակել և ներդնել ճանապարհատրանսպորտային վնասվածքների պակասեցմանն ուղղված կանխարգելիչ

պոպուլյացիոն ծրագիր, ինչը բերել է վնասվածքների դեպքերի հաճախության անկմանն՝ երեխաների շրջանում 59%-ով, իսկ համընդհանուր բնակչության շրջանում՝ 37%-ով:

Հենվելով «լավագույն փորձի օգտագործում» մոտեցման վրա, 2014 թ. սկիզբ առավ ռուս-նորվեգիական «Շենկուրսկում վնասվածքների կանխարգելման և մոնիթորինգի պոպուլյացիոն կողմնորոշմամբ ծրագրի» նախագիծը: Նախագծի նպատակը կայանում էր նրանում, որ Արխանգելսկի մարզի Շենկուրսկ քաղաքում ստեղծվեր քաղաքային (մոնիցիսկոպ) վնասվածքների ռեգիստր և մշակվեր վնասվածքների կանխարգելման քաղաքային պոպուլյացիոն կողմնորոշմամբ ծրագիր, հետագայում Շենկուրսկին վերագրելով Ռուսաստանում առաջին անվտանգ համայնքի կարգավիճակ և դրա միավորումը՝ Անվտանգ համայնքների միջազգային ցանցին (International Network of Safe Communities)՝ ԱՀԿ-ի հետ ասոցիացված: *Նախագծի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ Հարսթադի հաջողված փորձը՝ վնասվածքների ռեգիստրի հիման վրա միջգերատեսչական վնասվածքների կանխարգելման բնագավառում, կարելի է օգտագործել նաև Շենկուրսկում՝ հաշվի առնելով տեղական պայմանները և դրանց հետ որոշակի հարմարեցման դեպքում:*


Նախագծի իրականացումը կատարվել է Նորվեգիական հանրային առողջապահության ինստիտուտի ղեկավարությամբ և ֆինասավորվել է Նորվեգիայի Առողջապահության և սոցիալական ապահովության նախարարության գրանտի միջոցներից: Պետք է նշել, որ Նորվեգիական Հանրային առողջապահության ինստիտուտը մի քանի տասնամյակներ առաջ, արդեն, հովանավորում էր նմանատիպ նախագծերը Հարսթադում և Նորվեգիայի այլ քաղաքներում:

Ռուսաստանում առաջին վնասվածքների ռեգիստրը ստեղծելու համար որպես մոդել ընտրվել է Շենկուրսկը՝ կապված այն բանի հետ, որ քաղաքում վնասվածքների դեպքերի հաճախությունը ամենաբարձրներից մեկն է Արխանգելսկի մարզի տարածքների մեջ և կազմում է 141,3՝ ընդամենը 1000 բնակչի հաշվով:

Շենկուրսկի վնասվածքների ռեգիստրի աշխատանքների թեստավորումը անցկացվել է 2014 թ.՝ երկու պիլոտային հետազոտությունների ընթացքում: Առաջինի (n=30) նպատակն էր վնասվածքների հաշվառման թերթիկում պացիենտների համար հարցերի մատչելիության գնահատումը: Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ պացիենտները չեն դժվարանում վնասվածքների հաշվառման թերթիկը լրացնելիս: Երկրորդ հետազոտությունը (n=68) անցկացվում էր 2014 թ. նոյեմբերի 10-ից դեկտեմբերի 10-ը՝ գնահատելու համար

տվյալների հավաքման համակարգի լոգիստիկան, տվյալների կառավարման համակարգի թեստավորման և ռեգիստրով աշխատելու համար ռեգիստրատորների գործնական հմտությունների ստացումը: Այս ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լոգիստիկան, տվյալների կառավարման համակարգն և ռեգիստրատորների գործնական հմտությունները համապատասխանում են պահանջվող մակարդակին:

